ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2022թ. **N _____- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ՆՈՐ ԱՐԵՇ» ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, «ՄԱՔՍ ՄԵԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N112-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 18-րդ և 20-րդ հոդվածներով, 67-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, քաղաքացիական օրենսգրքի 954-966-րդ հոդվածներով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. **Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1) «Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Սահմանել, որ «Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունն է, և վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել «Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման գործընթացի իրականացումը:

4. Հավանություն տալ «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունում ներդրումներ կատարելու նոր առաջարկին՝ համաձայն հավելվածի:

5. Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի փետրվարի 11-ի ««Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման

հանձնելու մասին» հ.112-Ա որոշման 4-րդ կետը շարադրել հետևյալ՝ նոր խմբագրությամբ.

«4. Սահմանել, որ պայմանագրով հավատարմագրային կառավարչի կողմից ստանձնած երկարաժամկետ ներդրումային պարտավորությունների իրականացման 5-րդ տարում դրանք տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված չափով և ժամկետում լիովին ու պատշաճ կատարելու պարագայում՝ Ընկերության Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագիրը համարվում է երկարացված 17 տարի ժամկետով:»

6. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել համաձայնագիր՝ Երևան քաղաքային համայնքի և «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2014 թվականի հունիսի 9-ին կնքված բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագրում ավագանու որոշումից բխող փոփոխությունները կատարելու մասին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
«--------» ---------- 2022թ.
N ----------Ա որոշման

«ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Նախագծի անվանումը

Ք. Երևան, Նոր-Արեշ 22 փող., 63/1 հասցեում գտնվող «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության գործունեության զարգացման շարունակականության ապահովում՝ ի հաշիվ լրացուցիչ ***150.0 մլն /մեկ հարյուր հիսուն միլիոն/*** ՀՀ դրամ ներդրումների իրականացման:

Բժշկական կնետրոնի մասին

«Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությանը վերակազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու է 2012թ. փետրվարի 14-ի «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ն վերակազմակերպելու մասին» հ.399-Ա որոշման համաձայն վերջինից նոր՝ «Նոր արեշ» պոլիկլինիկա, «Սարի թաղ» պոլիկլինիկա, «Նուբարաշեն» պոլիկլինիկա փակ բաժնետիրական ընկերությունների առանձնացման ճանապարհով:

Ընկերության միակ բաժնետերը Երևան համայնքն է, որի անունից հանդես է գալիս Երևանի քաղաքապետը:

«Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ն գործունեության ոլորտներն են.

1. Հիվանդանոցային բուժօգնություն

1.1. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում:

1.2. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներից դուրս վճարովի հիմունքերով մատուցվող հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում:

2. Արտահիվանդանոցային բուժօգնություն

2.1. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում:

2.2. Վճարովի հիմունքերով մատուցվող արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում:

Բժշկական հաստատության կազմում գործում է հետևյալ բաժանմունքները.

Բժշկական հաստատության կազմում գործում է հետևյալ բաժանմունքները.

1. Արտահիվանդանոցային ծառայություններ, այդ թվում

1.1 թերապևտիկ ծառայություններ,

1.2 նեղ մասնագիտացված բժշկական օգնություն,

1.3 լաբորատոր-գործիքային ախտորոշիչ ծառայություններ:

2. Հիվանդանոցային ծառայություններ

2.1 մանկաբարձական բժշկական օգնություն,

2.2 գինեկոլոգիական բժշկական օգնություն,

2.3 նորածնային բժշկական օգնություն,

2.4 անկաբուժական ծառայություն /մանկական և մեծահասակներ/,

2.5 վիրաբուժական բժշկական օգնություն /մանկական և մեծահասակներ/,

2.6 քիթ-կոկորդ-ականջաբանական բժշկական օգնություն /մանկական և մեծահասակներ/,

2.7 դիմածնոտային վիրաբուժություն /մանկական և մեծահասակներ/

2.8 ուռուցքաբանական վիրաբուժականա /մանկական և մեծահասակներ/,

2.9 վերակենդանացման ծառայություն /մանկական և մեծահասակներ/,

2.10 թերապևտիկ ստոմատոլոգիա /մանկական և մեծահասակներ/,

2.11 վիրաբուժական ստոմատոլոգիա /մանկական և մեծահասակներ/,

2.12 ֆիզիոթերապևտիկ /մանկական և մեծահասակներ/,,

2.13 լաբորատոր ախտորշիչ

2.14 ճառագայթային ախտորոշիչ,

2.15 պլաստիկ վերակառուցողական և էսթետիկ վիրաբուժական ծառայություն

2.16 վնասվածքաբանական /մանկական և մեծահասակներ/,

2.17 ներզննական վիրաբուժական,

2.18 օրթոպդիաական /մանկական և մեծահասակներ/,

2.19 անեսթեզիոլագիական /մանկական և մեծահասակներ/,

2.20 գաստրոէնտերալոգիական,

2.21 շարժական անընկալունաբանական:

Բժշկական կենտրոնի ստացիոնար ծառայության մահճակալային ֆոնդում առկա է 80 մահճակալ:

Բուժհաստատության աշխատողների հաստիքացուցակը, ամսական անվանական աշխատավարձը և ֆիզիկական անձանց թվաքանակը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Հազար դրամ

Հ/հ	Ստորաբաժանման անվանում	Հաստիք	Միջին ամսական աշխատավարձ	Ֆիզիկական անձերի թիվը առ 01.10.2022թ
1	**Վարչատնտեսական անձնակազ**	**37.75**	**232.6**	**30**
2	**Ստացիոնար ծառայություն**	**148.5**	**186.8**	**209**
8	**Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություն**	**49.25**	**167.6**	**50**
Ընդամենը		**235.5**	**188.2**	**289**

«ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ԲԺՇԿԱԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

1. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Երևան քաղաքի ավագանու 12.02.2014թ. հ.112-Ա որոշման համաձայն՝ Երևանի ենթակայության «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ն հանձնվել է հավատարմագրային կառավարման «Մաքս Մեդ» ՍՊԸ-ին ***20 տարի ժամկետով***, արդյուքնում՝ Երևան քաղաքային համայնքի (այսուհետ՝ Հիմնադիր) և «Մաքս Մեդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Հավատարմագրային կառավարիչ) միջև 2014 թվականի հունիսի 9-ին կնքվել է «Բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման» պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որով սահմանվել են հավատարմագրային կառավարման պայմանները, կողմերի իրավունքները և պարտականությունները:

Համաձայն Պայմանագրի 2.8 կետի՝ Հավատարմագրային կառավարիչը պարտավորվել է 2014 թվականի հուլիսի 1-ից մինչև 2029 թվականը ներառյալ «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ում կատարել ***650,150.0 (վեց հարյուր հիսուն միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) հազար դրամի*** չափով ներդրումներ՝ Պայմանագրի 4-րդ հոդվածով սահմանված կարգով տարեկան մշակվող, համաձայնեցվող և հաստատվող Հավատարմագրային ծրագրին համապատասխան:

1.1 2014-2021 թվականների «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ում ներդրումային ծրագրի ուղղությունները

«ՄԱՔՍ ՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից կողմից ներդրումները կատարվել են հետևյալ ուղղություններով.

1. <u>Ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ:</u>

2014-2021 թվականներին իրականացվել է 186,255.6 հազար դրամի շինարարական աշխատանքներ: Վերանորոգվել են բուժհաստատության ընդունարանը, պոլիկլինիկան, վիրաբուժական, նորածնային, մանկաբարձական, գինեկոլոգիական, մանկաբուժական, դիագնոստիկ բաժանմունքները, վիրահատարանը և հետվիրահատական բաժանմունքը, ջեռուցման համակարգի կոմունիկացիաները:

2. <u>Տեխնիկական վերազինում (բժշկական սարքավորումներ, տեխնիկական սարքեր և օժանդակ միջոցներ, ապարատներ և գործիքներ, ինչպես նաև համակարգչային տեխնոլոգիայի և համապատասխան ծրագրային փաթեթներ, հիվանդանոցային կահույք և լաբորատոր տեխնիկական միջոցներ, հատուկ հագուստ և այլ անհրաժեշտ ձեռք բերմանն ուղղված ներդրումներ):</u>

2014-2021 թվականներին ձեռք է բերվել 347,101.0 հազար դրամի բժշկական սարքավորումներ և պարագաներ, տնտեսական գույք և այլ ներդրումներ:

1.2 2014-2021 թթվականներին «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ում ներդրումային ծրագրի արդյունքները

«Մաքս Մեդ» ՍՊԸ-ի կողմից բժշկական կենտրոնում իրականացված ներդրումային ծրագրի արդյունքում՝

1. Բուժհաստատությունը դարձել է բազմապրոֆիլ բժշկական կենտրոն,
2. Բացվել են նոր բաժանմունքներ /վիրաբուժական, դիմածնոտային, քիթ-կոկորդ-ականջաբանական, մանկաբուժական, ակնաբուժական/,
3. Ստեղծվել են նոր աշխատատեղեր,
4. Ընդլայնվել է մատուցվող բժշկական ծառայությունների ցանկը և ծավալը,
5. Արտահիվանդանոցային ծառայությունում բացվել է մանկաբուժական բաժին՝ սպասարկման տարածքի 0-18 տարեկան երեխաներին արտահիվանդանոցային թերապևտիկ և նեղ մասնագիտական բուժօգնություն և սպասարկում տրամադրելու նպատակով,
6. Բժշկական կենտրոնը հագեցվել է ժամանակակից պահանջներին համապատասխանող նոր բժշկական սարքավորումներով, այդ թվում՝ ***<u>կոմպյուտերային</u>***

<u>գոմոգրաֆիայի սարքավորումով</u>, ինը կարևոր է առանձին հիվանդությունների ախտորոշման և արդյունավետ բուժման կազմակերպման համար:

7. Աճել են կենտրոնի կողմից վճարովի հիմուքներով մատուցվող ծառայություններից ստացված մուտքերը,

8. Աճել են պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող ծառայություններից ստացված մուտքերը,

9. Ավելացնել են բժշկական կենտրոն հաճախումների թվի,

10. Ընկերությունը ինչպես տարածաշրջանում, այնպես էլ Երևան քաղաքում դարձել է մրցունակ բազմապրոֆիլ բժշկական կենտրոնը:

Ծրագիրը իր հերթին նպաստել է ինչպես պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող ծառայություններից ստացված եկամուտների ավելացմանը, այնպես էլ վճարովի հիմունքերով մատուցվող ծառայություններից ստացված մուտքերի ավելացմանը /Գծապատկեր 1/:

Վիրաբուժական ծառայությունների ընդլանումը, ծավալների ավելացումը և մանկաբուժական ծառայության ներդրումը արդարացվեցին:

Գծապատկեր 1



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ներդրումային ծրագրի իրագործման արդյունքում 2014-2021թթ. բժշկական կենտրոնի միջին տարեկան համախառն շահույթը կազմել է՝ 32,261.0 հազար ՀՀ դրամ, կամ կամ գումարային 8 տարիների ընթացքում՝ 258,091.0 հազար ՀՀ դրամ:

Գծապատկեր 2-ում պատկերված է ներդրումային ծրագրի իրագործումից ընկերության շահութաբերության աճի դինամիկան: 2019 և 2020 թվականներին բուժհաստատության համախառն շահույթի նվազումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված լարված համաճարակային իրավիճակով: Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ, ինչպես նաև ռազմական դրության արդյունքում էականորեն նվազել են հիվանդանոցային բուժհաստատությունների այցերը, հետևաբար՝ պացիենտների բժշկական օգնության և սպասարկման դիմաց և՛ պետական պատվերից, և՛ վճարովի հիմունքներով մատուցված ծառայություններից ստացված մուտքերը: Կտրուկ նվազել էին հիվանդանոցային բոլոր ծառայություններ հաճախելիությունը, կրճատվել էին պլանային վիրահատությունները և բուժումը, իսկ հիվանդանոցային բուժհաստատությունների բնականոն գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական հոսքերի գերիշխող մասը ապահովվում է պացիենտների պլանային բուժման արդյունքում:

Գծապատկեր 2



Ծրագրի իրագործման 8 տարիների ընթացքում բժշկական կենտրոնի զուտ շահույթը կազմել է 215,733.0 հազար ՀՀ դրամ, որից հիմնադրի և կառավարչի մասհանումների մեծությունը և ժամանակացույցը բերվում է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄ

Հազար դրամ

Տարեթիվ	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	Ընդամենը
Զուտ շահույթ	**2,378**	**19,639**	**24,637**	**14,622**	**43,991**	**39,742**	**24,803**	**45,922**	**215,733**
Մասհանում հիմնադրին	**476**	**3,928**	**4,927**	**2,924**	**8,798**	**7,948**	**4,961**	**9,184**	**43,147**
Մասհանում հավատարմագրային կառավարչին	**1,902**	**15,711**	**19,709**	**11,698**	**35,192**	**31,794**	**19,842**	**36,738**	**172,587**

2. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներդրումային ծրագրի հիմնական նպատակն է ընդլայնել բուժհաստաթյան կողմից մատուցվող արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպարկման ծառայությունը, քանի որ առողջության առաջնային պահպանման օղակը կարևոր դրակատարում ունի առաջնային և կանխարգելիչ բուժօգնության կազմակերպման, առանձին հիվանդությունների վաղ հայտնաբերման, կանխարգելման և արդյունավետ բուժման կազմակերպման համար:

Ներդրումային ծրագրի իրականացման նպատակով առաջարկվում է Երևանի ենթակայության «Նոր Արեշ» պոլիկլինիկա ՓԲԸ-ն վերակազմակերպել՝ միացնելով «Գրիրգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ին:

Ծրագրի իրականացման նպատակով հավատարմագրային կառավարիչ կազմակերպությունը պարտավորվում է կատարել լրացուցիչ ***150,000.0 հազար (մեկ հարյուր հիսուն միլոն) ՀՀ դրամի*** ներդրում՝ ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության համար նոր մասնաշենքի հիմնանորոգման և տեխնիկական վերազինման և հագեցման նպատակով՝ հարմարեցնելով խառը տիպի մեծ պալիկլինիկայի:

«Նոր Արեշ» պոլիկլինիկա ՓԲԸ-ի ընդհանուր նկարագիր

«Նոր Արեշ» պոլիկլինիկա ՓԲԸ-ն գտնվում է Էրեբունի վարչական շրջանի ք. Երևան, Ազատամարտիկների 82/2 հասցեում:

«Նոր Արեշ» պոլիկլինիկա ՓԲԸ-ն /այսուհետ՝ Պոլիկլինիկա/ ստեղծվել է Հայաստանի

Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2012թ. փետրվարի 14-ի «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ն վերակազմակերպելու մասին» հ.399-Ա որոշման համաձայն՝ «Գրիրգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ից առանձնացման ճանապարհով: Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի մայիսի 24-ի «Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման մասին հ.599-Ա որոշման համաձայն՝ Պոլիկլինիկային վերակազմակերպման ճանապարհով միացել է «Նուբարաշեն» պալիկլինիկա ՓԲԸ-ն:

Պոլիկլինիկայի միակ բաժնետերը Երևան համայնքն է, որի անունից հանդես է գալիս Երևանի քաղաքապետը:

Պոլիկլինիկայի կողմից մատուցվում են հետևյալ ***արտահիվանդանոցային ծառայությունները***.

1. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում, այդ թվում՝
   - 1.1 Բժշկական ընդհանուր պրակտիկիա /թերապևտիկ ծառայություններ/,
   - 1.2 Մանկաբուժական ընդհանուր պրակտիկա /մանկաբուժական ծառայություն/
   - 1.3 Մանկաբարձագինեկոլոգիական ընդհանուր պրակտիկա,
   - 1.4 Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ ծառայություններ,
   - 1.5 Նեղ մասնագիտական ծառայություններ, այդ թվում՝
     - *1.5.1 Մասնագիտացված բուժօգնություն,*
     - *1.5.2 Դիսպանսերային բուժօգնություն,*
   - 1.6 Ֆիզիոթերապևտիկ կաբինետ:
2. Վճարովի հիմունքներով մատուցվող արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում:

Պոլիկլինիկայի կողմից սպասարկվում է 37950 ազգաբնակչություն, այդ թվում՝ մինչև 18 տարեկան՝ 28355 երեխա, 18 և ավելի տարեկան 9594 մեծահասակ:

Համաձայն Երևանի քաղաքապետի 2022 թվականի ապրիլի 7-ի հ.1331-Ա և 2022 թվականի հուլիսի 19-ի հ.2662-Ա որոշումների՝ բուժհաստատության հաստիքային միավորների քանակ կազմում է 173.0 դրույք:

Պոլիկլինիկայի՝ ք. Երևան, Ազատամարտիկների 82/2 հասցեում գտնվող մասնաշենքը ընդհանուր մակերեսը 7035.9քմ է, իսկ ք. Երևան, Չնքուշի փողոց 4 հասցեում գտնվող շենք-շինությյան ընդհանուր մակերեսն է 521.8քմ:

ք. Երևան, Ազատամարտիկների 82/2 հասցեում գտնվող մասնաշենքը գտնվում են անմխիթար վիճակում և ստեղծման օրվավանից չի ենթարկվել վերանորոգման, Երևան քաղաքի բյուջեի շրջանակներում փոխարինվել են պատուհանները և անցկացվել է ջեռուցման համակարգ, սակայն ունի հիմնանորոգման և սեյսմիկ անվտանգության ապահովման կարիք, քանի որ շենքն ունի մեծ ճաքեր: Շենքի վիճակը ներկայացված է կից նկարներում:

ՄԱՆԿԱԿԱՆ
ԲԱԺԻՆ

Վերլուծելով բժշկական ծառայությունների շուկայի իրավիճակը գալիս ենք այն եզրահանգման, որ ժամանակակից հասարակությունը ձգտում է ստանալ առավելագույն քանակի բարձորակ ծառայություններ 1 տեղում՝ վերանորոգված և տեխնիկապես հագեցած բուժհաստատությունում: Սակայն Պոլիկլինիկայի շենքային պայմանները և տեխնիկական հագեցվածությունը թույլ չի տալիս մատուցել որակյալ և ժամանակակից պահանջներին համապատասխանող արտահիվանդանոցային բուժօգնություն և սպասարկում: Արդյունքում՝ պոլիկլինիկայից նախընտրում են օգտվել միայն սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձինք՝ պետական պատվերի շրջանակներում՝ գործնականում չապահովելով համապատասխան մուտքեր: Ընկերության ֆինանսական վիճակը ներկայացված է Աղյուսակ 3-ում:

Ինչպես երևում է Աղյուսակ 3-ից՝ պոլիկլինիկայի ընդամենը մուտքերը բավարարում են միայն ընթացիկ գործունեության արդյունքներով հաշվարկված ծախսերը կատարելու համար և հնարավորություն չի ստեղծում ձևավորվել լրացուցիչ ֆոնդեր՝ բուժհաստատության զարգացման, տեխնիկական հագեցման համար: Դրանով պայմանավորված՝ պոլիկլինիկիայում սպասարկվող ազգաբնակչության մի մասը գերադասում է բուժօգնություն ստանալ այլ բուժհաստատություններում ավելի ճիշտ ախտորոշվելու, բուժումը արդյունավետ կազմակերպելու և հիվանդությունը վաղ ժամկետներում կանխելու նպատակով:

Պոլիկլինիկայի վճարովի ծառայությունների եկամուտները ապահովվում են ախտորոշիչ և բուժական ծառայությունների միջոցով: Ախտորոշիչ ծառայությունները կազմում են ծառայությունների հիմնական օղակներից մեկը, որոնք անհրաժեշտ են բուժական գործընթացին զարկ տալու համար: Դրանց բարձր որակից է մեծապես կախված բուժման հետագա արդյունավետությունը: Ընկերության ներկայիս ախտորոշիչ ծառայությունների տեխնիկական հագեցվածությունը թույլ չի տալիս իրականացնել բոլոր անհրաժեշտ հետազոտությունները և ապահովել հիվանդների լիարժեք ախտորոշում: Կարևոր նշանակություն ունեն նոր տիպի հետազոտությունները, որոնք արդյունավետորեն կլրացնեն գործող հետազոտություններին:

Արդյունքում՝ պացիենտները ուղեգրվում են այլ բուժհաստատություններ՝ պոլիկլինիկայում չիրականացվող հետազոտությունները իրականացնելու համար: Որպես հետևանք խզվում է կապը պոլիկլինիկայի հետ, դանդաղում է բուժումը, հաճախորդները կրում են անհարմարություններ և նվազում է պոլիկլինիկայի եկամուտը:

Աղյուսակ 3

«Նոր Արեշ» պոլիկլինիկա ՓԲԸ-ի ֆինանսական ցուցանիշներ

Հոդվածների անվանումը	«Նոր Արեշ» պոլիկլինիկա				Նուբարաշեն պոլիկլինիկա			
	2019թ.	2020թ.	2021	2022 6 ամիս	2019թ.	2020թ.	2021	2022 6 ամիս
ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՈՒՏ, այդ թվում՝	**297,701.0**	**310,031.2**	**452,277.0**	**218,142.4**	**97,648.0**	**106,056.0**	**171,428.0**	**81,221.0**
Պետական պատվեր	232,130.5	234,189.0	239,464.3	120,928.3	79,241.0	78,509.0	96,683.0	40,123.0
Վճարովի հիմուներով մատուցված ծառայություններից մուտքեր	10,467.9	8,820.1	12,961.8	6,264.5	2,726.0	2,283.0	2,415.0	876.0
Անհատույց ստացված ակտիվների գծով	46,637.0	54,400.5	163,713.9	83,519.2	13,499.0	5,508.0	71,951.0	39,362.0
Այլ գործունեությունի	8,465.6	12,621.6	36,137.0	7,430.4	2,182.0	19,756.0	379.0	860.0
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝	**295,367.2**	**314,012.6**	**450,013.9**	**215,819.9**	**93,393.0**	**102,615.0**	**169,956.0**	**87,427.0**
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	223,353.4	231,057.3	254,699.2	118,612.2	66,341.0	63,570.0	79,202.0	40,808.0
Դեղորայք և բժշկական պարագաների գծով այդ թվում	56,680.3	65,198.1	175,230.9	89,205.7	15,696.0	8,807.0	73,579.0	40,566.0
Անհատույց ստացված	46,637.0	54,400.5	162,490.9	83,519.2	13,499.0	5,508.0	71,951.0	39,362.0
Կոմունալ ծախսեր	8,643.4	8,687.4	9,816.2	6,264.4	1,769.0	1,777.0	1,900.0	1,185.0
Այլ ծախսեր	6,690.1	9,069.8	10,267.6	1,737.6	9,587.0	28,461.0	15,275.0	4,868.0
Շահույթ (վնաս)	**2,333.8**	**(3,981.4)**	**2,263.1**	**2,322.5**	**4,255.0**	**3,441.0**	**1,472.0**	**(6,206.0)**
Շահութահարկի գծով ծախս	**467.0**		407.4		**291.0**	251	296	
Զուտ շահույթ (վնաս)	**1,866.8**		1855.7	2322.5	3964.0	3190.0	1176.0	-6206.0

Ուստի՝ նպատակ ունենալով ներկա մրցակցային պայմաններում /տարածաշրջանում գործում է 3 բազմապրոֆիլ բժշկական կենտրոն/ պահպանել բժշկանական կենտրոնի զարգացման ներկա մակարդակը, ապահովել բժշկական կենտրոնի բնականոն և մասնագիտացված գործունեությունը՝ ի շահ ազգաբնակչության, պետության և մասնավոր հատվածի, ինչպես նաև կայուն զարգացման շարունակականությունը, հաշվի առնելով, որ «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ն, լինելով բազմապրոֆիլ բժշկական կենտրոն, ներկայումս կարողանում է մրցակցել ծառայությունների մատուցման տվյալ շուկայում այլ բազմապրոֆիլ բժշկական կազմակերպությունների հետ՝ բուժսպասարկման ոլորտում զբաղեցնելով իր ուրույն տեղը, առաջարկվում է կատարել լրացուցիչ ***150,000.0 հազար (մեկ հարյուր հիսուն միլոն) ՀՀ դրամի*** ներդրումներ, ընդամենը ներդրումների գումարը դարձնելով ***800,183.7 (ութ հարյուր միլիոն մեկ հարյուր ութսուն երեք հազար յոթ հարյուր) հազար ՀՀ դրամ և*** երկարաձգել Երևան քաղաքային համայնքի և «Մաքս Մեդ» ՍՊԸ-ի միջև 2014 թվականի հունիսի 9-ին կնքվել է «Բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման» պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) հավատարմագրային կառավարման պայմանագիրը ևս 1 տարի ժամկետով՝ մինչև 2035 թվականը, որի ընթացքում հավատարմագրային կառավարիչ պետք է իրականացնի պոլիկլինիկայի մասնաշենքի հիմնանորոգում, տեխնիկական հագեցում և հարմարեցում խառը տիպի մեծ պոլիկլինիկային:

Նոր ներդրումային ծրագրի իրականացումը ենթադրում է.

- Ճիշտ և նպատակային կառավարման շարունակականության ապահավում,
- Բժշկական կենտրոնի տեխնիկական հագեցման շարունակականության ապահավում, նոր բուժսարքավորումների ձեռքբերում,
- Բուժանձնակազմի վերապատրաստում,
- Շուկայի պահանջարկին համապատասխանող նոր հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայությունների ներդրում,
- Մրցակցային պայմանների ապահովում՝ պահպանելով մրցունակ բազմապրոֆիլ բժշկակակն կենտրոնի դերը տարածաշրջանում,
- Շենքային պայմանների բարելավման շարունակականության ապահավում:

Ծրագրի իրագործման խնդիրներն են.

- Ընկերության կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում բնակչությանը որակյալ բժշկական ծառայությունների մատուցման շարունակականության ապահովում՝ նպատակային կառավարում և մասնագիտական բժշկական ծառայությունների համար սահմանված չափորոշիչների պահանջները կատարելու միջոցով:

• Պետական պատվերի ծառայություններին զուգահեռ վճարովի ծառայությունների ծավալի ավելացման շարունակականության ապահովում:

• Ժամանակակից պահանջներին համապատասխանող սարքավորումների և նոր մեթոդների ներդրմամբ՝ լաբորատոր-ախտորոշիչ գործիքային նոր հետազոտությունների իրականացում, ծավալների ավելացում:

• Բոլոր անհրաժեշտ բուժսարքավորումներով և պարագաներով ապահովված մի շարք նոր ծառայությունների ստեղծում, ինչը կնպաստի բարձրորակ բուժօգնության մատուցմանը:

3. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

3.1 Ներդրումային ծրագրի ուղղությունները

«Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ի ներդրումային ծրագրի իրականացվելու են 2 հիմնական ուղղություններով.

1. *Վերանորոգման և հիմնանորագման աշխատանքների իրականացում՝*

Գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում է կենտրոնի ներդրումային ծրագրով իրականացվող շինարարական աշխատանքներին զուգահեռ կատարել պոլիկլինիկայի նոր մասնաշենքի հիմնանորոգում՝ հարմարեցված խառը տիպի պոլիկլինիկական ծառայություն մատուցելուն:

2. *Նյութատեխնիկական բազայի հզորացում.*

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել ժամանակակից նոր բժշկական սարքավորումներ, լաբորատոր և ախտորոշիչ գործիքներ և կոշտ գույքի ձեռքբերում՝ պոլիկլինիկական մասնաշենքի նյութատեխնիկական բազան հագեցնելու նպատակով:

3.2 Ակնկալվող արդյունքեր

Պոլիկլինիկայի՝ վերակազմակերպման ճանապարհով միացումը հնարավորություն կընձեռի ապահովել արտահիվանդանոցային ծառայությունից օգտվող պացիենտների՝ ամբողջ ծավալով բժշկական օգնության և սպասարկման իրականացում, կատարել լիարժեք ախտորոշում՝ **ներառյալ դժվարամատչելի հետազոտությունները**, թերապևտիկ և նեղ մասնագիտական որակյալ բուժօգնության մատուցում՝ ի հաշիվ բժշկական կենտրոնի առաջատար մասնագետների և տեխնիկական հագեցվածության: Այսինք՝ մինիմալ ներդրումով ապահովել որակյալ արտահիվանդանոցային և հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում:

Նախատեսվող միջոցառումների իրականացումը կնպաստի նաև բժշկական կենտրոն հաճախումների թվի ավելացմանը, մատուցվող բժշկական ծառայությունների ընդլայնմանը, ցանկի մեծացմանը, որակի էլ ավելի բարձրացմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի շահութաբերության ապահովմանը, արդյունավետ և ճիշտ գնային քաղաքականության կիրառումը իր հերթին կնպաստի հաճախորդների հոսքի ավելացմանը, ինչն էլ կապահովի շահույթի շարունակական /կայուն/ աճ:

Այսպիսով «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ի արտահիվանդանոցային ծառայության ընդլայնման և տարածաշրջանում վերանորոգված և հագեցած արտահիվանդանոցային և հիվանդանոցային ծառայություն մատուցող բուժհաստատություն ունենալու նպատակով կառավարման ներդրումային ծրագրի շրջանակներում «Մաքս Մեդ» ՍՊԸ-ի կողմից ***2023 և 2024 թվականներին կատարել 150,0 մլն (մեկ հարյուր հիսուն միլոն) ՀՀ դրամի*** ուղղակի ներդրում: Ներդրումների ժամանակացույցը ներկայացված է ստորև:

N	Կատարվող աշխատանքների անվանումը	Շենքերի և շինությունների հիմնանորոգում և տեխնիկական հագեցում
1	2023 թվական	90,000,000
2	2024 թվական	60,000,000

2023 թվականին նախատեսվում է առաջնահերթ իրականացնել հիմնանորոգման աշխատանքներ, որը հնարավորություն կընձեռի *«Նոր Արեշ» պոլիկլինիկա ՓԲԸ-ի գործունեությունը ամբողջությամբ տեղափոխել բժշկական կենտրոն*: Ընդ որում՝ բժշկական կենտրոնը գտնվում է Պոլիկլինիկայի գործող տարածքից ոտքով ընդամենը 5 րոպե հեռավորության վրա, ուստի պոլիկլինիկայից օգտվող քաղաքացիների համար տեղափոխությունը չի առաջացնի խոչընդոտներ և լրացուցիչ ծախսեր:

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

4.1 Ֆինանսական ծրագրի կազմման ելակետային տվյալները

Նախագծի ֆինանսական ծրագրի մոդելավորման համար ելակետային են հանդիսացել հետևյալ տվյալները.

1. Նախագծի մոդելավորման ժամանակային պարամետրերը

- պլանավորման միջակայքը-1 տարի,

- պլանավորման միջակայքի տևողությունը-365 օր,
- պլանավորման հորիզոնը-մինչև 2035 թվական,
- գործառնական գործունեության սկիզբը-2023 թվական
- ներդումային փուլի տևողությունը- 2 տարի,
- գործառնական փուլի տևողությունը- մինչև 2035 թվական:

2. Մակրոտնտեսական միջավայր.

- նախագծի հիմնական հաշվարկային միավորը-ՀՀ դրամ,
- դրամական միավորի կարգը-ՀՀ հազար (մլն.) դրամ,
- նախագծի հաշվարկման մեթոդը-հաշվարկը հաստատուն գներով:

Այս մեթոդը հանդիսանում է ներդրումային նախագծերի մշակման և ներդրումների արդյունավետության վերլուծության ժամանակ առավել հաճախ կիրառվողը: Այս մեթոդի կիրառման ժամանակ դրամական միավորի գնողունակությունը ֆիքսվում է, որպես կանոն պլանավորման սկզբի դրությամբ: Արդյունքում ժամանակային տարբեր միջակայքերին վերաբերող արժեքային բոլոր ցուցանիշները (գներ, դրամական հոսքեր և այլ) ներկայացվում են համադրելի չափողականությամբ:

4.2 <u>Ֆինանսավորման արտաքին աղբյուրները</u>

Ֆինանսական ծրագիրը հիմնված է այն ենթադրության վրա, որ «Մաքս Մեդ» ՍՊԸ-ի հետ 2023 և 2024 թվականներին կիրականացնի լրացուցիչ ***150.0 մլն ՀՀ դրամ*** ներդրումներ՝ բժշկական կենտրոնի վերանորոգման, տեխնիկական վերազինման համար:

<u>«Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոնի եկամուտների և ծախսերի կանխատեսում</u>

Բժշկական կենտրոնի եկամուտների կանխատեսվող կառուցվածքը հիմնված է.

- բժշկական կենտրոնի 2019-2021թթ. ֆինանսական փաստացի ցուցանիշների վրա,
- բժշկական ծառայությունների մատուցման ընդհանուր շուկայի վերլուծության վրա,
- բժշկական ծառայություններ սպառողների պահանջարկի վերլուծության վրա,
- բժշկական ծառայությունների շուկայի զարգացման միտումների և ընդհանուր եզրակացությունների հիման վրա:

Ներդրումային ծրագրի իրագործումից հասույթը ձևավորման հիմնական աղբյուր են հանդիսանալու՝

1. Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող եկամուտներ,

2. Վճարովի հիմունքներով մատուցվող հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների դիմաց ստացվող եկամուտներ,

3. Այլ գործունեությունից ստացվող եկամուտներ:

Ընդհանուր առմամբ բժշկական ծառայությունների մատուցումից ակնկալվող հասույթի հիմքում դրվել է բժշկական կենտրոնի ներկայիս գործունեության ֆինանսական արդյունքները, շուկայի զարգացման կանխատեսումները, ծառայությունների սպառմանակնկալվող ծավալը և այլ:

Աղյուսակ 4

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հազար դրամ

	2023	2024	2025	2026	2027	2028
Պետական պատվերի շրջանակներում հիվա-նդանոցային բժշկական օգնություն այդ թվում	**313,500.0**	**320,000.0**	**321,600.0**	**323,208.0**	**324,824.0**	**326,448.2**
Ծննդօգնություն	107,000.0	109,000.0	109,545.0	110,092.7	110,643.2	111,196.4
Գինեկոլոգիական ծառայություն	7,500.0	9,000.0	9,045.0	9,090.2	9,135.7	9,181.4
Վիրաբուժական ծառայություններ	28,000.0	29,000.0	29,145.0	29,290.7	29,437.2	29,584.4
Մանկաբուժական ծառայություն	171,000.0	173,000.0	173,865.0	174,734.3	175,608.0	176,486.0
Հիվանդանոցային վճարովի բժշկական օգնություն այդ թվում	**105,958.6**	**106,488.4**	**107,020.8**	**107,555.9**	**108,093.7**	**108,634.2**
Գինեկոլոգիական ծառայություն	25,358.6	25,485.4	25,612.8	25,740.8	25,869.6	25,998.9
Վիրաբուժական ծառայություններ	80,600.0	81,003.0	81,408.0	81,815.1	82,224.1	82,635.3
Պետական պատվերի շրջանակներում արտահիվանդանոցային բժշկական ծառայություն	**444,500.0**	**445,000.0**	**447,225.0**	**449,461.1**	**451,708.4**	**456,225.5**
Վճարովի արտահիվանդանոցային բժշկական ծառայություն	**45,228.8**	**45,635.8**	**45,864.0**	**46,093.3**	**46,277.7**	**46,462.8**
Այլ վճարներ	**41,572.7**	**41,697.4**	**41,822.5**	**41,948.0**	**42,073.8**	**42,200.1**
Անհատույց Ստացված ակտիվներ	**60,268.5**	**60,449.3**	**60,630.6**	**60,812.5**	**60,995.0**	**61,178.0**
ԸՆԴԱՄՆԵԸ ԵԿԱՄՈՒՏ	**1,020,448.5**	**1,028,738.0**	**1,033,677.4**	**1,038,640.9**	**1,043,582.5**	**1,050,806.5**
Աշխատավարձ (անվանական)	683,700.5	684,110.8	686,878.6	690,176.9	693,982.4	695,633.9
Դեղորայք և բուժպարագաներ	62,247.4	62,753.0	62,020.6	62,318.5	62,614.9	63,048.4
Անհատույց ստացված ակտիվներ	60,268.5	60,449.3	60,630.6	60,812.5	60,995.0	61,178.0
Տնտեսական և կոմունալ ծախսեր	61,226.9	61,724.3	62,537.5	62,837.8	62,614.9	60,946.8
Ամորտիզացիոն հատկացումներ	52,042.9	51,436.9	51,683.9	51,932.0	52,179.1	57,794.4
Այլ ծախսեր	59,696.2	60,181.2	60,470.1	60,760.5	61,049.6	61,472.2
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**979,182.4**	**980,655.5**	**984,221.4**	**988,838.2**	**993,435.9**	**1,000,073.6**
Համախառն շահույթ	**41,266.1**	**48,082.6**	**49,456.0**	**49,802.7**	**50,146.6**	**50,732.9**

Աղյուսակ 4-ի շարունակություն

Հազար դրամ

	2029	2030	2031	2032	2033	2034	2035
Պետական պատվերի շրջանակներում հիվանդանոցային բժշկական օգնություն այդ թվում	**328,080.4**	**329,720.8**	**331,369.4**	**333,026.3**	**334,691.4**	**336,364.8**	**338,046.7**
Մանկաբուժական ծառայություն	177,368.5	178,255.3	179,146.6	180,042.3	180,942.5	181,847.2	182,756.5
Վիրաբուժական ծառայություններ	29,732.3	29,880.9	30,030.4	30,180.5	30,331.4	30,483.1	30,635.5
Գինեկոլոգիական ծառայություն	9,227.3	9,273.4	9,319.8	9,366.4	9,413.2	9,460.3	9,507.6
Մանկաբուժական ծառայություն	111,752.4	112,311.1	112,872.7	113,437.1	114,004.3	114,574.3	115,147.1
Հիվանդանոցային վճարովի բժշկական օգնություն այդ թվում	**109,177.3**	**109,723.2**	**110,271.8**	**110,823.2**	**111,377.3**	**111,934.2**	**112,493.9**
Գինեկոլոգիական ծառայություն	26,128.9	26,259.5	26,390.8	26,522.8	26,655.4	26,788.7	26,922.6
Վիրաբուժական ծառայություններ	83,048.4	83,463.7	83,881.0	84,300.4	84,721.9	85,145.5	85,571.2
Պետական պատվերի շրջանակներում արտահիվանդանոցային բժշկական ծառայություն	**460,787.8**	**465,395.6**	**470,049.6**	**474,750.1**	**479,497.6**	**484,292.6**	**489,135.5**
Վճարովի արտահիվանդանոցային բժշկական ծառայություն	**46,788.1**	**47,022.0**	**47,962.4**	**48,921.7**	**50,389.3**	**51,901.0**	**53,458.1**
Այլ վճարներ	**42,326.7**	**42,453.6**	**42,581.0**	**42,708.7**	**42,836.9**	**42,965.4**	**43,094.3**
Անհատույց Ստացված ակտիվներ	**61,361.5**	**61,545.6**	**61,730.2**	**61,915.4**	**62,101.1**	**62,287.5**	**62,474.3**
ԸՆԴԱՄՆԵԸ ԵԿԱՄՈՒՏ	**1,058,227.9**	**1,065,615.6**	**1,073,768.0**	**1,081,997.9**	**1,090,795.4**	**1,099,696.7**	**1,108,703.7**
Աշխատավարձ (անվանական)	700,546.8	705,437.5	708,686.8	714,118.6	719,925.0	725,799.8	731,744.4
Դեղորայք և բուժպարագաներ	65,610.1	66,068.2	66,573.6	67,083.9	67,629.3	68,181.2	68,739.6
Անհատույց ստացված ակտիվներ	61,361.5	61,545.6	61,730.2	61,915.4	62,101.1	62,287.5	62,474.3
Տնտեսական և կոմունալ ծախսեր	59,260.8	59,700.0	59,700.0	59,700.0	59,700.0	59,700.0	59,700.0
Ամորտիզացիոն հատկացումներ	58,202.5	58,608.9	61,500.0	62,000.0	63,000.0	64,000.0	65,000.0
Այլ ծախսեր	61,906.3	62,338.5	62,815.4	63,296.9	63,811.5	64,332.3	64,859.2
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**1,006,888.1**	**1,013,698.6**	**1,021,006.1**	**1,028,114.7**	**1,036,166.9**	**1,044,300.7**	**1,052,517.5**
Համախառն շահույթ	**51,339.8**	**51,917.0**	**52,761.9**	**53,883.1**	**54,628.4**	**55,396.0**	**56,186.1**

Պետական պատվերի շրջանակներում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման կանխատեսվող ծավալի հաշվարկման համար հիմք են ընդունվել ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրով հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայությունների համար հատկացված ֆինանսական միջոցների դինամիկան, ինչպես նաև տվյալ տարում ներդրվող ծառայության համար պետական պատվերի կանխատեսվող գումարը:

Վճարովի ծառայությունների կանխատեսվող ծավալի հաշվարկման համար հիմք է հանդիսացել բժշկական կենտրոնի կողմից փաստացի արձանագրված ցուցանիշների, ինչպես նաև նոր ներդրվող ծառայությունների կանխատեսվող վճարովի ծառայությունների ծավալը:

Գործունեության այլ տեսակներից ստացվող եկամտի հաշվարկման համար հիմք է ընդունվել փաստացի եկամտի ծավալը, առկա պայմանագրերը, ինչպես նաև կանխատեսվող աճը:

Եկամտային մասով հավատարմագրային կառավարման 13 տարիների ընթացքում նախատեսվում է

- պետական պատվերի շրջանակներում մատուցվող հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայություններից ստավող եկամուտների կայունության ապահովում՝ աճի միտումով,
- վճարովի հիմուքներով մատուցվող հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայություններիս ստացվող համախառն եկամուտների կայունության ապահովում՝ աճի միտումով:

Ներդրումային ծրագրի իրագործման արդյունքում բժշկական կենտրոնում ակնկալվող միջին տարեկան համախառն շահույթը կկազմի 51,200.0 հազար դրամ, միջին շահութաբերությունը կկազմի 3.9 % :

Ներդրումային ծրագրի իրագործումից ակնկալվող շահույթի, շահութաբերության ցուցանիշի և այլ ֆինանսական բնութագրիչներ ներկայացված են Աղյուսակ 5-ում և գծանկար 3-ում:

Միևնույն ժամանակ ներդրումային ծրագրի կայունության որոշման նպատակով հաշվարկվել է Ընկերության կողմից մատուցվող բժշկական ծառայություններից ակնկալվող եկամուտի դիսկոնտավորված դիսկոնտավորված արժեքը /PV/: Հաշվարկներում դիսկոնտավորման դրույքաչափը վերցված է 10%: Հաշվարկները ցույց են տվել, որ ներդրումային ծրագիրը օժտված է կայունության բավարար պաշարով, քանի որ նույնիսկ դիսկոնտավորման 10% կիրառման դեպքում Ընկերության դիսկոնտավորված եկամուտը կկազի **390,487.0** հազար ՀՀ դրամ /Աղյուսակ 5/:

Գծապատկեր 3

ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2023-2035թթ.



Աղյուսակ 5

ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՕԳՈՒՏՆԵՐԸ

Հազար դրամ

Տարեթիվ	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030
Ընդամենը եկամուտ	1,020,449	1,028,738	1,033,677	1,038,641	1,043,582	1,050,807	1,058,228	1,065,616
Ընդամենը ծախսեր	979,182	980,655	984,221	988,838	993,436	1,000,074	1,006,888	1,013,699
Համախառն շահույթ	41,266	48,083	49,456	49,803	50,147	50,733	51,340	51,917
Շահութահարկ	7,428	8,655	8,902	8,964	9,026	9,132	9,241	9,345
Զուտ շահույթ	33,838	39,428	40,554	40,838	41,120	41,601	42,099	42,572
Շահութաբերություն	3.32%	3.83%	3.92%	3.93%	3.94%	3.96%	3.98%	4.00%
Դիսկոնտավորման գործակից	1.00	1.10	1.21	1.33	1.46	1.61	1.77	1.95
Դիսկոնտավորված եկամուտ /արժեք, PV/	41,266	43,711	40,873	37,418	34,251	31,501	28,980	26,642

Աղյուսակ 5-ի շարունակություն

Հազար դրամ

Տարեթիվ	2031	2032	2033	2034	2035	Ընդամենը
Ընդամենը եկամուտ	1,073,768	1,081,998	1,090,795	1,099,697	1,108,704	13,794,699
Ընդամենը ծախսեր	1,021,006	1,028,115	1,036,167	1,044,301	1,052,518	13,129,100
Համախառն շահույթ	52,762	53,883	54,628	55,396	56,186	665,599
Շահութահարկ	9,497	9,699	9,833	9,971	10,114	119,808
Զուտ շահույթ	43,265	44,184	44,795	45,425	46,073	545,791
Շահութաբերություն	4.03%	4.08%	4.11%	4.13%	4.16%	3.9%
Դիսկոնտավորման գործակից	2.14	2.36	2.59	2.85	3.14	
Դիսկոնտավորված եկամուտ /արժեք, PV/	24,614	22,852	21,062	19,416	17,903	390,487

3.4 Շահույթի բաշխում

Ներդրումային ծրագրի իրականացման տևողությունը 2023 թվականից հաշված 13 տարի է, որոնց ընթացքում «Մաքս Մեդ» ՍՊԸ-ն նախատեսում է 2023 և 2024 թվականներին ներդնել լրացուցիչ ***150.0 մլն*** **/մեկ հարյուր հիսուն միլիոն/** ՀՀ դրամ:

Ծրագրի իրագործման ընթացքում ակնկալվում է 545.7 մլն ՀՀ դրամ զուտ շահույթի ստացում, որից հիմնադրի և կառավարչի մասհանումների մեծությունը և ժամանակացույցը բերվում է աղյուսակ 6-ում:

Ընդհանուր առմամբ հիմնադրին նախատեսվում է շահույթից մասհանումներ կատարել ներդրումների իրականացման տարվանից մինչև 2033թ. ներառյալ ներառյալ 20% չափով, իսկ 2034-2035 թվակկաներին՝ 40%:

Աղյուսակ 6

Հազար դրամ

Տարեթիվ	2023	2024	2025	2026	2027	2028	2029	2030
Զուտ շահույթ	33,838	39,428	40,554	40,838	41,120	41,601	42,099	42,572
Մասհանում հիմնադրին	6,768	7,886	8,111	8,168	8,224	8,320	8,420	8,514
Մասհանում հավատարմագրային կառավարչին	27,071	31,542	32,443	32,671	32,896	33,281	33,679	34,058

Աղյուսակ 6-ի շարունակություն

Հազար դրամ

Տարեթիվ	2031	2032	2033	2034	2035	Ընդամենը
Զուտ շահույթ	43,265	44,184	44,795	45,425	46,073	545,791
Մասհանում հիմնադրին	8,653	8,837	8,959	18,170	18,429	127,458
Մասհանում հավատարմագրային կառավարչին	34,612	35,347	35,836	27,255	27,644	418,334

Այսպիսով ներդրումային ծրագրի իրագործման ընթացքում հիմնադրին վճարվելիք շահաբաժնի չափը կազմում է շուրջ **127.5 մլն դրամ**, իսկ «Մաքս Մեդ» ՍՊԸ-ի օգուտը դրամական արտահայտությամբ կկազմի կկազմի 418.3 մլն ՀՀ դրամ :

4.5 *Բյուջետային արդյունավետություն եվ նախագծի սոցիալական գնահատական*

Սույն ծրագիրը համապատասխանում է կառավարության կողմից վարվող սոցիալ-տնտեսական քաղաքականությանը, մասնավորապես առողջապահության ոլորտի զարգացման հայեցակարգին: Այն հաշվի է առնում ոչ միայն ծրագրի անմիջական մասնակիցների շահերը, այլև տեղական ինքնակառավարման մարմինների, կառավարության և հասարակության՝ ի հաշիվ.

1. Հանրապետության և մասնավորապես Երևանի սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորության.

- Ներդրումների ներգրավում՝ լրացուցիչ 150.0 մլն ՀՀ դրամ, իսկ ընդհանուր՝ 800.1 մլն ՀՀ դրամի գումար չափով՝ լիովին արտաբյուջետային միջոցների հաշվին,
- Բյուջե վճարվող հարկերի ավելացում՝ շահութահարկի տեսքով ընդամենը մոտ 119.8 մլն ՀՀ դրամով (միջին տարեկան 9.2 մլն ՀՀ դրամ), չհաշված մուտքերը պետական և համայնքային նշանակության այլ հարկերից:
- «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոնի հիմնադրին՝ Երևանի քաղաքապետարանին շահույթի ապահովում՝ տարեկան միջին կտրվածքով մոտ 9.8 մլն ՀՀ դրամ:

2. Բնակչության շահերը.

- Մատուցվող առողջապահական որակյալ ծառայություններից օգտվելու հնարավորություն,
- Նոր ծառայություններից օգտվելու հնարավորություն,
- Մատուցվող ծառայությունների մրցունակ գների առաջարկում,
- Ձեղչերից օգտվելու հնարավորություն:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՆՈՐ ԱՐԵՇ» ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, «ՄԱՔՍ ՄԵԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N112-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Նոր Արեշ» պոլիկլինիկա ՓԲԸ-ն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2012թ. փետրվարի 14-ի «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ն վերակազմակերպելու մասին» հ.399-Ա որոշման համաձայն՝ «Գրիրգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ից առանձնացման ճանապարհով: Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի մայիսի 24-ի «Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման մասին հ.599-Ա որոշման համաձայն՝ «Նոր Արեշ» պոլիկլինիկա ՓԲԸ-ին վերակազմակերպման ճանապարհով միացել է «Նուբարաշեն» պալիկլինիկա ՓԲԸ-ն:

«Նոր Արեշ» պոլիկլինիկա ՓԲԸ-ն հանդիսանում է խառը տիպի միջին մեծության պոլիկլինիկա և մատուցվում է թերապևտիկ և մանկաբուժական, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ, ֆիզիոթերապևտիկ և այլ արտահիվանդանոցային ծառայություններ .

«Նոր Արեշ» պոլիկլինիկա ՓԲԸ-ի կողմից սպասարկվում է 37950 ազգաբնակչություն, այդ թվում՝ մինչև 18 տարեկան՝ 28355 երեխա, 18 և ավելի տարեկան 9594 մեծահասակ:

Համաձայն Երևանի քաղաքապետի 2022 թվականի ապրիլի 7-ի հ.1331-Ա և 2022 թվականի հուլիսի 19-ի հ.2662-Ա որոշումների՝ բուժհաստատության հաստիքային միավորների քանակ կազմում է 173.0 դրույք:

Պոլիկլինիկային սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Ազատամարտիկների 82/2 հասցեում գտնվող մասնաշենքի ընդհանուր մակերեսը 7035.9քմ է, իսկ ք. Երևան, Չնքուշի փողոց 4 հասցեում գտնվող շենք-շինությյան ընդհանուր մակերեսը՝ 521.8քմ:

Երևան քաղաքի Ազատամարտիկների 82/2 հասցեում գտնվող մասնաշենքը գտնվում են անմխիթար վիճակում և ստեղծման օրվանից չի ենթարկվել վերանորոգման, 4 հարկանի շենքից ամբողջ ծավալով օգտագործվում է միայն 3-րդ հարկը, մյուս հարկերը օգտագործվում են մասնակի, քանի որ ջրագծերը չեն վերանորոգվել ստեղծման օրվանից, և անընդհատ վթարման պատճառով ջրերի արտահոսքից կաբինետները, միջանցքներն ամբողջությամբ պատվել են բորբոսով, տհաճ հոտով, իսկ տարածքը տարվա բոլոր եղանակներին խոնավ է:

Երևան քաղաքի բյուջեի շրջանակներում մասնակի փոխարինվել են պատուհանները և անցկացվել է ջեռուցման համակարգ, շենքն ունի ամբողջական

հիմնանորոգման և սեյսմիկ անվտանգության ապահովման կարիք, քանի որ շենքն ունի մեծ ճաքեր:

Նախնական հաշվարկների արդյունքում պարզվել է, որ նոր շենքի կառուցումը և հագեցումը կպահանջի ավելի քիչ ֆինասական միջոցներ, քանի գորխծող շենքի սեյսմակայության ապահովման և հիմնանորոգման համար անհրաժեշտ ֆինասական միջոցներ են: Ընդ որում պոլիկլինիկայի շենքի տեղում նոր մասնաշենքի կառուցումը գործնականպես անհար է, քանի որ պոլիկլինիկայի «Բ» մասնաշենքը ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սեփականության իրավունքով անհատույց տրամադրվել է այլ ֆիզիկական անձի:

Պոլիկլինիկական ծառայություններում վճարովի հիմունքներով մատուցվաղ ծառայությունների եկամուտները ապահովվում են ախտորոշիչ ծառայությունների միջոցով: Ընկերության ներկայիս ախտորոշիչ ծառայությունների տեխնիկական հագեցվածությունը թույլ չի տալիս իրականացնել բոլոր անհրաժեշտ հետազոտությունները և ապահովել հիվանդների լիարժեք ախտորոշում: Կարևոր նշանակություն ունեն նոր տիպի հետազոտությունները, որոնք արդյունավետորեն կլրացնեն գործող հետազոտություններին: Արդյունքում՝ պացիենտները ուղեգրվում են այլ բուժհաստատություններ՝ պոլիկլինիկայում չիրականացվող հետազոտություններն իրականացնելու համար: Որպես հետևանք խզվում է կապը պոլիկլինիկայի հետ, դանդաղում է բուժումը, հաճախորդները կրում են անհարմարություններ և նվազում է պոլիկլինիկայի եկամուտը:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Նոր Արեշ» պոլիկլինիկա ՓԲԸ-ի ներկայիս ֆինասական վիճակը թույլ չի տալիս կատարել հիմնանորոգման աշխատանքներ, ինչպես նաև հաշվի առնելով շենք-շինության տեխնիկական վիճակը, նման մեծ ծավալի աշխատանքներ և ֆինասական միջոցներ ներդնելը անարդյունավետ չէ և ժամանակատար: Արդյունքում՝ տեղի կունենա նաև բնակչության արտահոսք տարածքում գործող այլ պոլիկլինիկական բուժհաստատություններ, մասնավորապես՝ «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ:

«Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ն Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի փետրվարի 11-ի հ.112-Ա որոշման համաձայն հանձնվել է հավատարմագրային կառավարման «Մաքս Մեդ» ՍՊԸ-ին՝ 2014 թվականի հուլիսի 1-ից մինչև 2029 թվականը ներառյալ «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ում 650,150.0 (վեց հարյուր հիսուն միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) հազար դրամի չափով ներդրումներ կատարելու պայմանով: Կատարված ներդրումների արդյունքում բժշկական կենտրոնը վերանորոգել և հիմնանորոգել է, տեխնիկապես հագեցրել է բժշկական կենտրոնը, ներդրել է նոր բժշկական ծառայություններ՝ ներգրավելով առաջատար մասնագետների, արդյունքում՝ բարելավելով կենտրոնի ֆինասական վիճակը:

«Մաքս Մեդ» ՍՊԸ-ն ներկայացրել է նոր ներդրումային ծրագիր՝ համաձայն որի կառավարիչը պարտավորվում է կատարել լրացուցիչ 150.0 մլն դրամի ներդրում՝ ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության համար նոր մասնաշենքի

հիմնանորոգման և տեխնիկական վերազինման և հագեցման նպատակով՝ հարմարեցնելով խառը տիպի մեծ պալիկլինիկայի:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ ֆինասական վիճակը, տեխնիկական հագեցվածությունը, ինչպես նաև հիմք ընդունելով «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ի հավատարմագրային կառավարիչ «Մաքս Մեդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր ներդրումային ծրագիրը՝ նպատակահարմար է գտնվել վերակազմակերպել «Նոր Արեշ» պոլիկլինիկա ՓԲԸ-ն՝ միացնելով «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ին: «Նոր Արեշ» պոլիկլինիկա ՓԲԸ-ի՝ վերակազմակերպման ճանապարհով միացումը հնարավորություն կընձեռի ապահովել արտահիվանդանոցային ծառայությունից օգտվող պացիենտների՝ ամբողջ ծավալով բժշկական օգնության և սպասարկման իրականացում, կատարել լիարժեք ախտորոշում՝ ներառյալ դժվարամատչելի հետազոտությունները, թերապևտիկ և նեղ մասնագիտական որակյալ բուժօգնության մատուցում՝ ի հաշիվ բժշկական կենտրոնի առաջատար մասնագետների և տեխնիկական հագեցվածության: Այսինք՝ մինիմալ ներդրումով ապահովել որակյալ արտահիվանդանոցային և հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում:

Վերակազմակերպումների արդյունքում հնարավոր կլինի նաև նվազեցնել աշխատավարձի գծով ծախսերը՝ վարչատնտեսական անձնակազմի հաստիքների օպտիմալացման միջոցով, որն էլ հնարավորություն կստեղծվի աշխատակիցներին վճարել կատարված աշխատանքին համարժեք աշխատավարձ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՆՈՐ ԱՐԵՇ» ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, «ՄԱՔՍ ՄԵԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N112-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու, «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներդրումներ կատարելու առաջարկին հավանություն տալու և երեվան քաղաքի ավագանու 2014 թվականի փետրվարի 11-ի հ.112-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՆՈՐ ԱՐԵՇ» ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, «ՄԱՔՍ ՄԵԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N112-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու, «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներդրումներ կատարելու առաջարկին հավանություն տալու և երեվան քաղաքի ավագանու 2014 թվականի փետրվարի 11-ի հ.112-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ